ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 11 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-Ի

2023-2028 ԹԹ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

<< Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ուսումնական շենքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 3

3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 7

3.1. ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽՈՐԴ 3 ՈՒՍՏԱՐԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..17

4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 21

5.ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 26

6.ԴՊՐՈՑԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 28

7. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ 33

8.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ 47

9.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 47

10.ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 50

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն կարգի դպրոցի զարգացման ծրագիրը ընդգրկում է հետևյալ բաղադրիչները.

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ . ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ
4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ
6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
7. ՌԻՍԿԵՐԸ
8. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Սույն զարգացման ծրագիրը մշակվել է

ՀՀ ԿԳՄՍՆ 22 սեպտեմբերի 2022թ. 35-Ն հրամանի

հավելվածի պահանջներին համաձայն

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թ.թ. զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին » ՀՀ օրենք
- Աշխատանքային օրենսգիրք
- «Կրթության մասին » ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշչի» դրույթներով
- Դպրոցի կանոնադրություն
- Դպրոցի ներքին իրավական ակտեր
- Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ, կարգեր
- ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականների պետական ծրագիրը/

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածությունունեցող և համակողմանիորեն զարգացած,

հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Յուրաքանչյուր ազգի բնորոշ է գործունեության առավել ընդգծված հատկանիշ, կերպար, ձև, որի շուրջ համախմբվում են ազգովի: Հնագույն ժամանակներից մեզ համար մշակույթն ու գիտությունը ծառայել են նպատակ և միջոց ազգային հարատևման համար: Պատմական փաստերը վկայում են, որ երկիր մոլորակի տարբեր կողմերում հայերն ու Հայաստանը ճանաչվել և գնահատել են մշակութային, գիտական ներուժով:

«ՀՀ հանրակրթության մասին» օրենքով հանրակրթական դպրոցի գործունեության նպատակը անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանների ապահովվում է: Դրա համար շատ կարևոր է, որ սովորողը գիտակցի, որ գիտությունը, արդի տեխնոլոգիաները կրթության մեծագույն արժեքներ ենժամանակակից աշխարհում: Ժամանակակից աշխարհում գիտական նվաճումներին տիրապետելը ոչ միայն կարևոր է, այլև անհրաժեշտ: Որևէ խնդիր լուծում չունի առանց կրթության: Ամեն ինչ սկսվում է կրթությունից և վերջանում կրթությամբ:

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններն աննախադեպ արագ ու դինամիկ են ընթանում: Նման փոփոխությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ գիտության ու տեխնիկայի ընձեռած նոր հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի, աշխատանքի, գիտելիքների ձևավորման ու փոխանցման ոլորտ: Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքները և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործականությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում: Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում. հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն

արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում:Ըստ այդմ կրթության որակի նկատմամբ պահանջներն ավելի արդիական են դառնում:

Հանրակրթության դերն աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության և արժեքային որակներ: Հանրակրթության համակարգում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով: Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղություններն՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Կապան քաղաքի համայնքային կարիքները:

<<Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի առաքելությունն է.

սովորողների համար մատչելի, բարձրորակ, արդյունավետ և արդիական կրթության, նրանց մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացման, նրանց անձի՝ որպես քաղաքացու ձևավորման, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման համար անհրաժեշտ կարողունակությունների ձեռքբերման, բարենպաստ կրթական միջավայրի ապահովումն է և մասնագիտական կրթության նախապատրաստելը: Դպրոցի տեսլականն է սովորողի մոտ ձևավորել այնպիսի կարողունակություններ,որոնք սովորողները կկիրառեն ողջ կյանքի ընթացքում:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):

1.Դպրոցը հանդիսանում է «ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 27 [illegible], 21[illegible] հանրակրթության հանրային ծառայության գրանցման համարը 03Ա-058084, ծածկագիր 10001377):

2. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 23.10.2017 թ., գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից:

3 .Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի 22.10–ի №727 Ա հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- Տարրական հանրակրթական- 35 տեղով
- Հիմնական հանրակրթական - 60տեղով
- Միջնակարգ հանրակրթական-35տեղով

4 Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Կավարտ թաղամաս 124, հեռ. 028524637:

5 Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Կնիքը, ձևաթղթերը և անհատական այլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող է զուգակցվել անգլերենը և ռուսերենը:

6 Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

«Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական միջնակարգ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը հիմնվել է 1960 թվականին՝ որպես ութամյա դպրոց,որոշ ժամանակ չի գործել, վերաբացվել է 1991 թվականին , որպես ութամյա դպրոց դպրոց, 1992 թվականից հանրակրթական միջնակարգ դպրոց:

Դպրոցում աշխատում է 20 ուսուցիչ՝ որից՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ՝17, միջնակարգ մասնագիտական՝3 :

Դպրոցի աշակերտների թիվը 70 է:

Մանկավարժական խորհուրդը կազմված է 13 անդամից:

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից:

Ծնողական խորհուրդը կազմված է 12 անդամից:

Աշակերտական խորհուրդը կազմված է 17- անդամից:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, ունի հաստատված համադպրոցական տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլան, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները:ՈՒսումնադաստիարակչականաշխատանքների հաշվետվությունները ըստ կիսամյակները քննարկվել է կառավարման և խորհրդակցական մարմիններում:

Դպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ:

Դպրոցի զարգացման սույն ծրագրի նպատակը հաջողակների դպրոցի ձևավորումն է, ինչը ենթադրում է.

- Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար,
- Սովորողի կրթական կարիքի գնահատում,
- Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ,
- Օտար լեզուների խորացված ուսուցում,
- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ
- Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված , և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները,
- Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկային,
- Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ,
- Սովորողների մտավոր զարգացման պայմաններ,
- Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

Այսօր գիտելիքը ամենուր է: Կան գիտելիք ստանալու բազմաթիվ աղբյուրներ և հնարավորություններ: Հետևաբար՝ դպրոցը գիտելիք փոխանցելու աղբյուրներից ընդամենը մեկն է: Եվ որպեսզի աշակերտները ցանկանան դպրոցից գիտելիք ստանալ, ուսուցիչը պետք է լինի հետաքրքիր մարդ, ունենա սովորեցնելու, սովորելու,լսելու և հասկանալու հմտություններ: Մերօրյա դպրոցի հենասյուները պետք է լինեն արհեստավարժ ուսուցիչները: Ուսուցիչը շատ կարևոր դեր ունի ուսուցման գործում, սակայն գործընթացի կենտրոնում պետք լինի սովորողը: Ուսուցիչը պետք է կարողանա դասարանում ստեղծել հրապուրիչ ուսումնական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող ազատ և անկաշկանդ կդրսևորի իր առավելագույն ներուժը՝ անկախ իր հնարավորություններից:

Կարևոր է նշել նաև, որ դպրոցի տնօրենի աշխատանքում կան որոշակի մարտահրավերներ: Այսօր թե՛ տնօրենը, թե՛ փոխտնօրենները և թե՛ ուսուցիչները պետք է կերտեն ուսումնառության նոր ուղիներ՝ առաջնորդելով ուսումնական գործընթացը:

3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Կապանի թիվ 11միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար, ուսումնասիրելով դպրոցի ողջ մասին տեղեկատվությունը, վեր են հանվել դպրոցի ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու հնարավոր խոչընդոտները՝ այն ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել խնդիրների լուծման ընթացքում: «Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել նաև դպրոցի տնօրենի, տնօրենի տեղակալների և մանկավարժների նախորդ ուսումնական տարիների հաշվետվությունները , հաստատության ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Հաշվի են առնվել նաև հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի N181- Ն որոշման 16 –րդ կետի:

Ըստ այդմ կատարել եմ իրավիճակի ՈՒԹՀԽ (SWOT) վերլուծություն.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Դպրոցի շենքային պայմաններ	
• Հաստատության տարածքը ցանկապատվածև անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար. • Տարածքի ընդարձակությունը, դասասեն-յակների լուսավորվածությունը • Վերանորոգված գրադարան և ընթերցասրահ • Հաստատությունն ունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ • Հաստատությունը ունի վերանորոգված և կահավորված/հարմարեցված/ հանդիսությունների դահլիճ • Առկա է շուրջօրյա հոսող խմելու ջուր: • Հաստատությունը ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, դասասենյակներում, միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ՝ սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան ջերմաստիճանով: • Առկա է բուժկետ/ աշխատող չկա/ որտեղ կարող տրամադրվել առաջին բուժօգնությունը:	• Շենքը կարիք ունի վերանորոգման • Հարմարեցված մարզադահլիճ,որը ձմեռվա սեզոնին դժվարացնում է դասապրոցեսի անցկացմանը/մակերեսի փոքրության պատճառով/ • Դասասենյակների մակերեսը չի համապատասխանում օրենքով սահմանված կարգին: • ԲՏՃՄ լաբորատորիաները հագեցված չեն նորանոր սարքավորումներով • Հրաձգարանի ստեղծում •Մարզահրապարակի բարեկարգում •Թեք հարթություն •Դպրոցի շենքը հնարավորինս համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը
2.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր /դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը/	

• Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն • ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են	• Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն • ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում՝ որպես

դպրոցի կառուցվածքային առանձնա-հատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապա-տասխան • Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու , ՈՒԹՀՎ վերլուծություն կատարելու նպատակով	ներքին իրավական ակտերի
Մանկավարժական համակազմը	
• Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակեր-տակենտրոն մոտեցում: • Մանկավարժական և ուսուցչական անձնակազմերը ունեն համապատասխան բարձրագույն մանկավարժական որակավորում • Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ • Ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ: Վարպետորեն համադրելով ուսուցման մեթոդներն ու հնարները, կազմակերպում են ուսանելի դասեր: • Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ • Ուսուցիչներն ակտիվ մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատ-րաստումներին	• Ժամանակակից մեթոդների, ՏՀՏ միջոցների ոչ լիարժեք տիրապետումը՝ որպես ուսումնական գործընթացի խոչնդոտ • Դասալսումների իրականացման, վերլուծության արդյունքում հետադարձ կապի բացակայությունը • Համագործակցությունը այլ պպրոցների հետ բացակայում է: • Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ- ին և նրանից բխող ծրագրային ու մեթոդական փոփոխություններին: • Ուսուցիչները չունեն տարրակարգ , ուսուցիչների 10%-ն է հայտ ներկայացրել մասնակցեուլ կամավոր ատեստավորմանը և ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող «Տարվա լավագույններ» մրցույթին չունեն մասնակից: • Դեռևս կան ուսուցիչներ, հատկապես ոչ երիտասարդ, որ թերանում են ՏՀՏ-ների կրիառմամբ դասապատրաստումներից
Կառավարման և խորհրդակցական մարմինները	

•Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը •Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները: •Դպրոցը գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում՝ որպես կամավորներ •Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին •ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճա-խումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում •ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում •Հաստատության գործունեության	•Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ

թափանցիկություն •Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն •Ամենամյա եռակողմ նիստ, որտեղ ներկայացվում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն, ակտիվ ուսուցիչները, ծնողները և աշակերտներն էլ արժանանում են տնօրենի խրախուսանքին /պատվոգիր, շնորհակալագիր/:	
Աշակերտական համակազմը	
• Միջինից բարձր առաջադիմությունը • Մասնակցությունը ստեղծագործական և սպորտային մրցույթներին • Ակտիվ մասնակցությունը «Կենգուրու» , «Ռուսական արջուկ» միջազգային և «Մեղու» հանրապետական մրցույթներին • Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշը • Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին Բուհեր ընդունվելու բարձր ցուցանիշը •Սովորողները արտադասարանական միջոցառումներին ակտիվ	• Մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում հաղթանակների ցածր ցուցանիշը • Ուսման նկատմամբ մոտիվացիայի պակասը • Աշակերտների ինքնագնահատման ոչ օբյեկտիվ լինելը • Սովորողների ընտանեկան /սոցիալական վիճակը/ • Աշակերտների ինքնաստուգման, ինքնագնահատման ցածր մակարդակը: • Ծնողների հաճախ անտարբերությունը, ոչ օբյեկտիվ մոտեցումը և միջամտությունը

մասնակցություն են ցուցաբերում •Ունեն նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով աշխատելու մեծ պատրաստակամություն	
Հաղորդակցություն, համագործակցություն	
• Համագործակցություն ՀՀ ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀՊՏՀ, ԵՊԼՀ, ԿԱՊՀ բուհերի,քոլեջների հետ • • Համագործակցություն մի շարք կազմակերպությունների և կառույցների հետ՝ սովորողի սոցիալիզացիային նպաստելու, քաղաքացիական գիտակցություն ձևավորելու նպատակով. • «Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ» ,	• Միջազգային կառույցների հետ համագործակցության ընդլայնում • Համագործակցություն այլ մարզերի դպրոցների հետ, հասարակական կազմակերպությունների հետ, • միջազգային կազմակերպությունների հետ

• Իրականացվում են դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ամրապնդող միջոցառումներ • Դպրոցը համագործակցում է ԿԳՄՍՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԱԻՆ-ի, գրադարանների, ոստիկանության, և այլ կառույցների հետ	
Ուսումնական միջավայրը	
• Հաստատությունն ունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ, աշխարհագրության կաբինետ • ապահովված է դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով • Հանդիսությունների դահլիճը կահավորված է/հարմարեցված/ • Դպրոցում ստեղծվել է փառքի անկյուն՝նվիրված պատերազմում զոհված դպրոցի շրջանավարտներին •	• Դպրոցը չունի նորագույն նյութատեխ-նիկական բազայով զինված առարկայական դասարաններ, Հայոց պատմություն, և այլն, աուդիո-դասարաններ: -Հրաձգարանի բացակայություն -ԲՏՃՄ առարկանների լաբորատոր սարքավորումներ • Անհրաժեշտ է ուսումնական ծրագրերին համապատասխան գրականություն • Նոր սերնդի էլեկտրոնային գրատախտակներ և պրոյեկտորների անհրաժեշտություն • Համակարգչային սենյակի կահավորում • Կաբինետային դասասենյակներում համակարգչի բացակայություն/կապված ինտերնետ կապի հետ/ • Մեթոդ կաբինետի վերաբացում • Բարեկարգ մարզահրապարակի բացակայություն
Կրթության որակը	

• դպրոցում առկա է ազգային գաղափարախոսության հենքի վրա ուսուցման կազմակերպման մոտիվացիա	• Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման կազմակերպումը՝ որպես շեմ դիտարկելով ամենացածր մակարդակը: • Միջառարկայական համագործակ-ցությանն ու լրացուցիչ կրթության ծրագրերի գրեթե բացակայություն • Ցածր իրավագիտակցություն ունեցող սովորողների խնդիրը • Կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների ոչ նպատակային իրագործումը
Նորագույն տեխնոլոգիաները և նորարություններ	
•ՏՀՏ –ի կիրառումը դասապրոցեսին	• « Հիբրիդային ուսուցում
Հնարավորություններ	**Խոչընդոտներ (վտանգներ)**
• Ուսուցչական համակազմի գերակշռող մասի պատրաստակամությունը • Նոր նախաձեռնությունների և դրանց իրագործման համար հնարավորություն-ների ստեղծումը • Լրացուցիչ կրթական ծրագրերի իրագործումը • Միջազգային համագործակցության	• Ուսման նկատմամբ հետաքրքրության պակաս • Համավարակը • Ֆինանսական գործընկերներ (հովանավորներ) ձեռք բերելու ցածր հավանականությունը •

ընդլայնումը • Նյութատեխնիկական բազայի համալրումը • Սովորողների առաջընթացի և բարձր առաջադիմության ապահովումը • կամավոր ատեստավորման մասնակ ցող, ստեղծագործ ուսուցիչների թվի ավելացումը	Որակավորման տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորման մասնակցող, ստեղծագործ ուսուցիչների թվի ավելացումը

3.1. ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽՈՐԴ *3* ՈՒՍՏԱՐԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ **3** ուստարիների համար



Սովորողների թիվը ընթացիկ և նախորդ **3** ուստարիների համար



Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիներիհամար



ՈՒԻՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ **3** ուստարիների համար



Դպրոցն ունի 3 առարկայական մասնախմբեր.



4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով:

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակն է պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն

զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա:

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները շարադրվել են՝ հիմնվելով մի քանի ելակետային դրույթների վրա:

Կրթության առաջընթացի հիմքում դնել «Սովորեցրու, որ սովորես» կարգախոսը:

- ✓ Յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնելու ցանկացած ուսումնական նյութ իրեն համար ճիշտ ընտրված մեթոդներով և ժամանակահատվածում:
- ✓ Ուսուցչական համակազմը դպրոցի հենքն է:
- ✓ Յուրաքանչյուր ուսուցիչ կարող է դառնալ լավագույնը:
- ✓ Ուսուցիչը սովորողին պետք է ճանաչի ավելի լավ, քան սովորողի ծնողը:
- ✓ Ծնող-սովորող-ուսուցիչ համագործակցությունը «լավ դպրոցի» հաջողության գրավականն է :

Ելնելով նշված նպատակներից, ինչպես նաև սովորողներին արդյունավետ ու արդիական կրթություն տալու անհրաժեշտությունից, պետք է՝

- ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեության համար
- սովորողների և մանկավարժների արդյունավետ գործունեության համար ստեղծել բարենպաստ պայմաններ
- ամրապնդել դպրոցի նյութատեխնիկական բազան
- ձևավորել դպրոցի առանձին առարկայական դասասենյակներ, տեսադասարաններ
- արդիականացնել դպրոցում կիրառվող տեղեկատվական համակարգերն ու ծրագրերը
- ներմուծել նոր կրթական տեխնոլոգիաներ, մոդելներ, ՏՀՏ գնահատման գործիքներ
- դպրոցն ապահովել որակական բարձր հատկանիշներով օժտված աշխատակազմով. համատեղ աշխատանքով աջակցել ուսուցիչների որակավորման տարակարգերի շնորհման գործընթացին, կամավոր ատեստավորման մասնակցության գործընթացին
- կրթական գործընթացում մշտապես կիրառել ժամանակակից մեթոդներ
- նպաստել սովորողների իրավական գիտակցության ձևավորմանը և զարգացմանը

- սովորողների մոտ ձևավորել կրթության և ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք և ձգտում
- ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր սովորող, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կարողանա օգտվել իր հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայությունների դիմելու իրավունքից
- դպրոցի կառավարման համակարգը, ինչպես նաև ծնողների, ուսուցչական անձնակազմի ու սովորողների միջև հարաբերությունները հանրության համար դարձնել առավել թափանցիկ
- դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդակցական մարմիններին, հատկապես ծնողական և աշակերտական խորհուրդներին
- նպատակաուղղված աջակցել ծնող-սովորող-ուսուցիչ(դպրոց) փոխհամագործակցության ամրապնդմանը,
- ձեռնարկել միջոցառումներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կրթական գործընթացը բարելավելու նոր հաջողություններ արձանագրելու ուղղությամբ:

Թվարկված խնդիրները լուծելու արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- կապահովվի արդիական և որակյալ կրթություն, որի արդյունքում կավելանա հայրենասեր, հաջողակ և մրցունակ շրջանավարտների թիվը
- կընդլայնվեն սովորողների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները
- սովորողները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու համար
- սովորողների մոտ կձևավորվի վերլուծական և քննադատական մտածողություն՝ ապահովելով ազատ քաղաքացու ձևավորումը
- կբարելավվեն ուսուցիչների մասնագիտական որակները, կմեծանա վերջիններիս գործունեության արդյունավետությունը, կմեծանան դպրոցի անձնակազմի

յուրաքանչյուր անդամի կողմից դրական արդյունքներ դրսևորելու ցանկությունը և նախաձեռնողական որակները

- կավելանա որակավորման տարակարգ ունեցող և հավելավճար ստացող ուսուցիչների թիվը
- կրթական ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների հետ համագործակցությունը կնպաստի կրթության արդիականացմանը
- դպրոցի կառավարումը կդառնա ավելի ժողովրդավար և թափանցիկ
- կմեծանա դպրոցի, մանկավարժական կոլեկտիվի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների վստահությունը, և կաճի դպրոցի գործունեության բարելավմամբ շահագրգռված անձանց թիվը:

Վերոնշյալ խնդիրները լուծելիս առաջնորդվել այն համոզմունքով, որ յուրաքանչյուր սովորող անհատ է, ուրույն իր տաղանդով և ունակություններով, և որպես այդպիսին, պահանջում է անհատական մոտեցում:

Ուսուցման գործընթացին զուգահեռ պետք է մեծ ուշադրություն դարձնել արտադասարանական և արտադպրոցական ուսուցմանը՝ ստեղծելով պայմաններ սովորողների հետաքրքրությունների ու նախասիրությունների բավարարման, ստեղծագործական, նախաձեռնողական կարողությունների և կիրառական հմտությունների զարգացման համար:

5. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

N	Ոլորտ	Նպատակ
1	Աշխատակազմ (կադրեր)	Մանկավարժական համակազմի որակական բարելավում։ Կամավոր ատեստավորում և տարակարգ ունեցող ուսուցիչների թվի ավելացում։ Տարաբնույթ վերապատրաստումների, մանկավարժական հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքների ապահովում։
2	Սովորողներ (ուսումնական գործընթաց)	Սովորողների կրթական կառուցվածքի բովանդակային վերազինում ; Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության ապահովում՝ պահպանելով փոփոխություններն ու նորարարությունները։ Ապահովել սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքները
3	Ուսումնական միջավայր	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում։
4	Խորհուրդներ	Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում։ Ակտիվացնել կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը համադպրոցական բոլոր նախաձեռնություններում և աշխատանքներում։
5	Համագործակցություն	Սովորողների սոցիալականացման ապահովում։ Համագործակցություն համայնքի և դպրոցների հետ։ Համագործակցություն ԲՈՒՀ- երի հետ։ Համագործակցություն տարբեր մասնագիտությունների մարդկանց, հասարակական կազմակերպությունների հետ։

6	Ներդպրոցական վերահսկողություն	Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն։Ապահովել յուրաքանչյուր տարվա համար ՆԴՎ-ի կազմումը՝ ժամանակացույցին, բովանդակությանն ու կատարողներին համապատասխան։

6.ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ , ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ 1

Մանկավարժական համակազմի որակական բարելավում

Ուսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում

1.Հանձնարարել մասնախմբերի ղեկավարներին հարցը քննարկել մ/մ նիստերում2.Մասնախմբերի կողմից կազմել ժամանակացույց ինքնազարգացման աշխատանքների արդյունքում հետքրքրաշարժ թեմաները, ստեղծագործական աշխատաքնները ներկայացնելու համար։
3.Աջակցել մանկավարժներին տարբեր վերապատրաստումներին մասնակցելուհամար։
4. Աջակցել <<Տարվա լավագուններ>> մրցույթին մասնակցելու համար։

Առարկայական մասնախմբերի կողմից ստեղծել առարկայական ռեսուրս կենտրոններ

1. Կազմել ինքնազարգացման աշխատանքի արդյունքում դուրս բերվածհետաքրքրաշարժ, կարևոր թեմաների ցանկը:
2. Նյութերով համալրել ռեսուրս-կենտրոնը:
3. Նյութերը օգտագործել դասապրոցեսներում:
4. Մասնախմբերի կողմից նյութերը համադրել, միջառարկայական կապըապահովվող նյութերով համալրել դպրոցի ռեսուրս բազան

Ապահովել բոլոր ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունը

1.Ուսումնասիրել ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառումըդասապրոցեսի ընթացքում,դասասենյակում ունենալով համակարգիչ:
2.Իրականացնել դասալսումներ, դիտարկումներ, և քննարկումներ
3.Ըստ կարողությունների և հմտությունների կազմել ՏՀՏ գիտելիքները խորացնելու աշխատանք իպլանավորում:
4.Իրականացնել դասընթացը:

ՆՊԱՏԱԿ 2

Սովորողների կրթական կառուցվածքի և բովանդակության վերազինում

- Ուսուցման և զարգացման ապահովումը կրթական ծրագրերի շրջանակում (կարողունա-կությունների զարգացում):

  1.Սովորողներին ծանոթացնել քննադատական մտածողության և ճանաչողական մեթոդներին ու ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ։
  2.Սովորողների մոտ զարգաց-նել.
  ա.լեզվական կարողունակություն և գրագիտություն
  բ.սովորել սովորելու կարողունակություն
  գ. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակու-թյուն
  դ.ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
  ե.թվային և մեդիա կարողունակություն
  զ.մշակութային կարողունակություն
  է.մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
  ը.տնտեսական կարողունակություն։

- Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան :

  Ուսուցման գործընթացին զուգահեռ ապահովել՝
  1.հայրենասիրական 2.մարդասիրական
  3.քրիստոնեական 4.ֆիզիկական
  5.գեղագիտական 6.մշակութային
  7.աշխատանքայի 8.սեռական դաստիարակությունը։

- Նորարարական ծրագրերի իրականացում, մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում:

  1. Անհատական ուսուցման կազմակերպում և վերահսկում։
  2. Նոր մեթոդների նպատակային կիրառում։
  3. Դասապրոցեսներին ներդնել և օգտագործել առարկայական էլեկտրոնային դասեր (ԿԳՄՍՆ-ի էլեկտրոնային կրթական նյութեր՝ պաշարների շտեմարան էջից)։
  4. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել հեռավար ուսուցում
  5. Լաբորատոր աշխատանքների կիրառման միջոցով ավելացնել գրավչությունը բնագիտական առարկաների նկատմամբ։

ՆՊԱՏԱԿ 3

Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի (ֆիզիկական միջավայր և նյուտեխնիկական բազա) ապահովումը:

1.Բարեկարգ ֆիզիկական միջավայրի ապահովում :

1. Ստեղծել հրաձգարան
2. Մարզադահլիճը կահավորել անհրաժեշտ գույքով :
3. Փորձել ստեղծել կամավոր ներդրողների միություն (համայնքից,ծնողներից, շրջանավարտներից)
4. Կազմակերպել սանիտարական օրեր
5. Կազմակերպել դպրոցում աշակերտների սննդի հարցը՝համաձայնեցնելով ԿԳՄՍ նախարարության հետ

2.Ստեղծել բարենպաստ պայմաններ առողջության պահպանման և ֆիզիկական զարգացման համար:

1. Հետևողական լինել դպրոցում հրաձգարան ստեղծելու հարցում:
2. Խնդիրը ներկայացնել լիազոր մարմին :
3 ՈՒնենալ էլեկտրոնային գրատախտակ
4.Ապահովել օդափոխությունը, մաքրությունը:

3.Դպրոցի կրթական պահանջներին համապատասխան ունենալ առարկայական կաբինետներ:

1.Հրաձգարանի ունենալու դեպքում դա հարմարեցնել դպրոցի կրթական պահանջներին
2.Համակարգչային սենյակը վերազինել նոր համակարգիչներով և պրոյեկտորներով, իսկ լաբորատորիաները՝ նյութերով :
3 .Բարեկարգել ռազմագիտության կաբինետը,
4.Նոր և ժամանակակից գրադարանի և ընթերցասրահի ստեղծում և համալրում ուսումնական ծրագրերին համապատասխան գրականությամբ :

ՆՊԱՏԱԿ 4

Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացումը

Կառավարման խորհուրդ

Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևալ ուղղություններով
1.Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին , մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին: 2.Կրթության պետական կառավարման լիազորված մարմնին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: 4.Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում 5.Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար: 6.Ապահովել մյուս խորհուրդների հետ սերտ համագործակցություն:

Ծնողական խորհուրդ

Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում.
1.Ծնողների և մանկվարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում 2.Ծնողների մասնակցությունը սովորողների ուսուցման , դաստիարակության գործընթացին , ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների: 3.Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել հանդիպումներ , սեմինարներ 4.Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացին՝ հրապարակել կայքում 5.Ծնողխորհրդի կապի ամրապնդում՝ դպրոցի կառավարման խորհրդի և մանկվարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը:
6. Աջակցությունը ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բանագավառում:

Աշակերտական խորհուրդ

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը.
1.Աջակցել աշակերտական խորհրդին՝ բարձրացնելու դպրոցի և իր կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները:
2. Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ աշակերտի ինքնավարության միջոցով:
3.Աշակերտական խորհրդի գործունեության հիմքում կարևորելով սովորողների պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը , շարունակել ակտիվ հասարակական անհատի կրթման , սեփական կարծիքների ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները: 4.Շարունակել ամենօրյա աշխատանքները, կազմակերպվող միջոցառումները , հանդիպումները, բանավեճերը, կլոր սեղաններն ու մրցույթները , նպատակաուղղել աշակերտի ազատ մտածողության դաստիարակման , ուսման նկատմամբ անձնական պատասխանատվության ձևավորման գործին: 5.Ամրապնդել աշակերտուսուցիչ , աշակերտ-ծնող , աշակերտ-համայնք հարաբերությունները: 6.Ստեղծել բարեկարգ աշխատասենյակ ԱԽ-ի համար

Ստեղծել շրջանավարտների խորհուրդ

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման , ինչպես նաև զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունեն շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդները:
1.Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ: 2.Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների , տեղական իշխանության ներկայացուցիչների 3.Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը , արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը: 4.Շրջանավարտների խորհորդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն: 5.Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի , դպրոցի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար:

Մանկավարժական խորհուրդ

1.Շարունակել մանկավարժական խորհրդի աշխատան-քերում կիրառել մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքները:2.Ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական խորհրդի ընդունած որոշումները ճիշտ և ժամանակին կատա-ռումը:3.Ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքների կիրառում:4.Առաջավոր փորձի հիման վրա դպրոցի՝ աշխատանքների ակտիվացում:5.Ուսումնական պլանների, ծրագրերի և դասագրքերի համալիր ստեղծման գործընթացին ուսուցիչների անտիպ մասնակցության ապահովում:

ՆՊԱՏԱԿ 5

Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն:

Ուսուցիչներիաշխատանքներիվերահսկողություն:/կարգնահատում/

Ստանդարտալ ուսուցչի մասնագիտական պարտա-կանությունները նկարագրող փաստաթղթերին, ուսումնական ծրագրերին:

2.Ուսուցիչների փորձի ուսումնասիրություն:

3.Կատարել մանկավարժական աշխատանքի վերլուծություն, մշտադիտարկում:

4.Վերահսկել մասնակցությունը մեթոդմիավորման աշխատան-քներին, համադպրոցական միջոցառումներին:

5.Դասավանդվող առարկայի արդյունքների վերահսկում:

6.Առարկայական ծրագրի կատարողականի պարբե-րական ստուգում:

7.Վերահսկողության արդյուն-քում կազմել տեղեկանք , որը կպարունակի վերահսկողության հիմքերը , տեղեկատվության ստացման աղբյուրները , կատարված դասալսումների թիվը, վերահսկողության պլանով տրված հարցերի պատաս-խանները, հետևություններ և առաջարկություններ:

8.Վերահսկողության արդյունք-ները քննարկել արտահերթ մանկխորհրդի նիստում:

Աշակերտների կողմից գիտելիքի յուրացման գործընթացի վերահսկողություն:կարիքների գնահատում/

1.Իրականացնել դասարանական-ընդհանրական վերահսկո-ղություն

2.Ուսումնասիրել.

աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում

- ուսման նկատմամբ վերաբերմունքը
- աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը
- հոգեբանական մթնոլորտը դասարանում

3.Պարզել գիտելիքների մակարդակը,

- հմտությունների ու կարողություն-ների տիրապետումը
- ինքնուրույն սովորելու կարողությունը

4.Մնցկացնել ստուգարք առանձին առարկաներից ձեռք բերված գիտելիքների արդյունքները ամփոփելու նպատակով:

5.Վերահսկողության արդյունքում արձանագրված խնդիրների լուծ-ման համար ձեռնարկել համա-պատասխան միջոցառումներ :

Դպրոցի բոլոր պլանների կատարման մշտական վերահսկողություն:

1.Վերահսկել բոլոր տեսակի պլանների պատշաճ և ժամանակին կատարումը.

- առարկայական մասնախմբերի աշխատանքային պլաններ
- փոխտնօրենների տարեկան աշխատանքային պլաններ
- մանկավարժական աշխատողների աշխատանքային պլաններ
- դասղեկների տարեկան աշխատանքային պլան
- գրադարանավարի տարեկան աշխատանքային պլան
- համադպրոցական միջոցառումների աշխատանքային պլան

2.Հաստատել հերթապահության կարգը և վերահսկել դրա իրականացումը:

3.Իրականացնել վերահսկողություն հաճախումների, դրանց հաշվառման, մատենավարության աշխատանքների նկատմամբ

7. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

№ / №	Գործողություններ, միջոցառումներ	Պատասխանատուները	Ժամանակացույցը	Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները
1	2	3	4	5
1.	Հրաձգարանի ստեղծում մարզահրապարակիբարեկարգում:	ԿԳՄՄՆ, Վարչատնտեսական համակարգող , տնօրենություն	2023-2028թթ.	-
2.	Առարկայական դասասենյակների բարելավում համակարգչով,	Վարչատնտեսական համակարգող , տնօրենություն	2023-2028թթ	-
3.	Ուսումնական ծրագրի յուրացման գործնական բնույթ կրող աշխատանքների ընդլայնում	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2028թթ.	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում

4.	Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանման միջոցառումներ	Տնօրենություն, ուսուցիչներ	2023-2028թթ.	-
5.	Սովորողների մոտ առողջ ապրելակերպի մշակույթ ձևավորելուն ուղղված միջոցառումներ: Ամենօրյա պայքար ծխելու և այլ վտանգավոր սովորույթների դեմ	Տնօրենություն, ուսուցիչներ	2023-2028թթ.	-
6.	Հաստատության ուսումնական միջավայրը հարմարեցնել սովորողների որակյալ ուսուցմանը և ուսումնառության կազմակերպմանը:	Տնօրենություն	2023-2028թթ.	-
7.	Մշակել և իրականացնել աշխատանքային ծրագրեր, որոնք կնպաստեն ակնկալվող նպատակներին հասնելուն:	Տնօրենություն	2023-2028թթ.	-
8.	Գնահատել աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքում ապահովված առաջընթացը, և վերանայել զարգացման ծրագիրը:	Տնօրենություն	2023-2028թթ /տարին մեկ անգամ/	-

9.	Ստեղծել անհատականացված և մոտիվացնող ուսումնական միջավայր՝ բոլոր սովորողների , հատկապես ԿԱՊԿՈՒ սովորողների համար	Տնօրենություն	2023-2028թթ.	-
10.	Միջոցառումների, զեկուցումների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ) և դրանց վտանգավորությանը	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028թթ.	-
11.	Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցների,նրանց գործունեության դերի և որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ	Տնօրենություն	2023-2028թթ.	-
12.	Ռազմահայրենասիրական դաստիարակության խթանում.	Տնօրենություն, դասղեկներ, Զինղեկ	2023-2028թթ.	Հրաձգարանի ՍՏԵՂԾՈՒՄ
13.	Մշակել դպրոցի սովորողի ակադեմիական և սոցիալական հմտությունների զարգացման հաջողությունները նկարագրող հաշվետվողականության համակարգ և ապահովել դրա լրացումը բոլոր սովորողների համար:	Տնօրինություն	2023-2028թթ.	-

14.	Օժտված և շնորհալի սովորողների բացահայտմանը, նրանց կարողությունների մակարդակով կրթության գործի կազմակերպմանը ուղղված աշխատանքներ	Տնօրենություն, ուսուցիչներ	2023-2028թթ.	-
15.	Կառավարման խորհրդի դերի բարձրացում՝ ներգրավելով նրան աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում	Տնօրինություն	2023-2028թթ.	-
16.	Ուսումնական հաստատությունում աուդիո-դասարանների (օտար լեզուների ուսուցման համար) գործարկում	Վարչատնտեսական համակարգող	2023-2028թթ.	Աուդիո դասարանների համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ
17.	Ձևավորել դպրոցի հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդ	Տնօրեն	2023-2028թթ.	Աջակցման համար -
18.	Խորհրդակցական մարմինների իրավագիտակության բարձրացմանը ուղղված սեմինարների շարք	Տնօրեն, կառավարման խորհրդի նախագահ, խորհրդակցական մարմինների նախագահներ	2023-2028թթ.	-
19.	Սոցիալական ծրագրերի իրականացում	Տնօրենություն, ծնողներ, , ուսուցիչներ, սովորողներ	2023-2028թթ.	-

20.	Իրականացնել ծնողական համայնքի մշակութային, սոցիալական և մտավոր ներուժի գնահատում: Իրականացնել դրանց համապատասխան միջոցառումներ:	Տնօրեն	2023-2028թթ.	-
21.	Դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումների, քննարկումների կազմակերպում	Տնօրենություն	2023-2028թթ. տարին առնվազն մեկ անգամ	-
22.	Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ	Տնօրենություն	2023-2028թթ. պարբերաբար	-
23.	Ծնողների ակտիվ ներգրավվածության կազմակերպում	Տնօրենություն	2023-2028թթ. պարբերաբար	-
24.	Ստեղծել արդյունավետ հարաբերություններ սովորողների ընտանիքների հետ:	Տնօրեն	2023-2028թթ.	-

25.	դպրոցի գաղափարի ներդրում	Տնօրենություն	2023-2028թթ. պարբերաբար	-
26.	Սահմանել սովորողների և ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների համար ինքնագնահատման, ռեֆլեքսիայի, թափան-ցիկության և էթիկական վարքագծի համապարփակ սկզբունքներ և աշխատանքները կազմակերպել դրանց համապատասխան:	Տնօրենություն	2023-2028թթ. պարբերաբար .	-
27.	Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ,	2023-2028թթ. պարբերաբար	-
28.	Ուսուցիչների մեջ ձևավորել սովորողների կարողությունների և հմտությունների ձեռքբերման և իրավական գիտակցությունը ուսուցման գործընթացում բարձրացնելու հմտություններ	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ,	2023-2028թթ. պարբերաբար	-

29.	Սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման	Տնօրենություն, մմ նախագահներ	2023-2028թթ.	-
30.	Որակավորման տարակարգ չունեցող և ուսուցիչների համար ստեղծել պայմաններ որակավորման տարակարգի առաջին աստիճանին հասնելու համար	Տնօրենություն, մմ նախագահներ	2023-2028թթ.	-
31.	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատ-վություններ. վերապատրաստումների միջոցով զարգացնել ներառական կրթություն իրականացնող ուսուցիչների դասավանդման հմտությունները	Տնօրենություն, մմ նախագահներ	2023-2028թթ.	Դպրոցի բուջեի միջոցներով
32.	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճում-ներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերց-ումներ	Տնօրենություն, մմ նախագահներ	2023-2028թթ.	-

33.	Իրականացնել աշխատանքներ ուսումնական հաստատության աշխա-տողների խրախուսման և սովորողների անվտանգության բարելավման ուղղու-թյուններով:	Տնօրենություն	2023-2028թթ.	-
34.	Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից, այդ նպատակով կազմակերպել դասընթացներ	Տնօրենություն, մմ նախագահներ	2023-2028թթ.	Դպրոցի բուջեի միջոցներով
35.	Աջակցել մանկավարժներին իրենց մեթոդական աշխատանքների արդյունքներին վերաբերող նյութերը մշակելու և տպագրելու գործում, ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, նպաստել ուսուցիչների ինքնակրթմանը և ինքնազարգացմանը	Տնօրենություն, մմ նախագահներ	2023-2028թթ.	-

36.	Ուսուցիչների կողմից սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդների կիրառում	Տնօրենություն, ուսուցիչներ	2023-2028թթ.	-
37.	Փոխադարձ դասալսումների ակտիվացում	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028թթ.	-
38.	Բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում, միջավայրի ֆիզիկական խոչընդոտների վերացում, հավասար հնարավորությունների ստեղծում	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028թթ. պարբերաբար	–
39.	Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում	Տնօրենություն ,դասղեկներ	2023-2028թթ. պարբերաբար	–
40.	Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա: Սովորողի դաստիարակություն՝ ազգային բարոյական նորմերով:	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028թթ.	-

41.	Կարողունակությունների ձևավորման առաջնայնություն՝ հանրակրթության պետական նոր չափորոշչին համապատասխան:	Տնօրենություն, ուսուցիչներ	2023-2028թթ.	-
42.	Ուժեղացնել և ավելի բովանդակային դարձնել միջառարկայական համագործակցությունը:	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028թթ.	-
43.	Նորացնել կրթության կառավարման համակարգը՝ աշակերտակենտրոն կրթադաստիարակչական աշխատանքը դարձնելով ուսուցման և դաստիարա-կության գլխավոր պայման:	Տնօրենություն	2023-2028թթ.	-
44.	Ապահովել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա	Տնօրենություն	2023-2028թթ.	-

45.	Մշտապես վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ	Տնօրենություն ,դասղեկներ	2023-2028թթ.	-
46.	Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սովորողների, ինչպես նաև սովորողների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն ապահովելու, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ	Տնօրենություն ,դասղեկներ	2023-2028թթ.	-
47.	Յուրաքանչյուր սովորողի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավար-ժական աջակցություն, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվարություններ ունեցող երեխաների հետ/ԿԱՊԿՈՒ/	Տնօրենություն, մմ նախագահներ	2023-2028թթ.	-

48.	Դասղեկի ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր:	Տնօրենություն ,դասղեկներ	2023-2028թթ.	-
49.	Ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին սովորողների ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները:	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028թթ.	-
50.	Համագործակցել իրավապահ մարմինների հետ:	Տնօրեն	2023-2028թթ.	
51.	Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում:	Տնօրենություն	2023-2028թթ.	-
52.	Կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար կազմա-կերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ:	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028թթ.	-

53.	Ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվու-թյան տրամադրումը:	Տնօրենություն	2023-2028թթ.	-
54.	Ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ:	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028թթ.	-
55.	Ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռ-նությունները:	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028թթ.	-
56.	Համագործակցություն այլ դպրոցների հետ, հասարակական կազմակերպությունների հետ, միջազգային կազմակերպությունների հետ:	Տնօրենություն, դասղեկներ	2023-2028թթ.	-

57.	Սահմանել զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող գնահատման չափանիշներ:	Տնօրեն, կառավարման խորհուրդ, խորհրդակցական մարմիններ	Ծրագրի իրականացման սկզբում և յուրաքանչյուր տարեկան հաշվետվությունից հետո այն վերանայել	-

. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

ՌԻՍԿԵՐԸ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Նորամուծությունների մերժում	Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում
Մոտիվացիայի ցածր մակարդակ	Ներդնել խրախուսանքի համակարգ
Իրազեկվածության ոչ բավարար մակարդակ	Մշտապես ծանոթացնել ոլորտի նորություններին, քաջալերել նախաձեռնողներին
Ֆինանսական միջոցների կառավարման բարդացված գործընթաց	Գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ

8. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների՝ (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները) գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

- ✓ դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,
- ✓ դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,
- ✓ համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,
- ✓ դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
- ✓ զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,
- ✓ յուրաքանչյուր ուստարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,

- ✓ յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի,
- ✓ յուրաքանչյուր ուստարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից:

Ժամանակի պահանջներից և իրավիճակներից ելնելով՝ սույն ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման:

Զարգացման ծրագրի կազմման ընթացքում դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ տեղի ունեցած հանդիպումների ընդացքում բարձրաձայնված ներքոնշյալ առաջարկությունները ընդգրկված են զարգացման ծրագրի մեջ.

1. Հրաձգարանի ստեղծում
2. Մարզահրապարակի վերանորոգում
3. Էլեկտրոնային գրատախտակի ձեռք բերում:
4 ԲՏՃՄ առարկայական կաբինետներում համակարգչի առկայություն և լաբորատոր սարքավորումների ձեռք բերում:
5 Նոր ինտերնետ կապի առկայություն

9 ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

<<Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց>> դպրոցը կշարունակի լինել դպրոց բոլորի համար: Այս հարցում ելակետային պետք է համարել այն մոտեցումը, որ յուրաքանչյուր աշակերտ ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր յուրատկություններն և սովորելու իր նախընտրածուղին, և դպրոցը կլինի այն փարոսը, որը կուղեկցի նրան դեպի լուսավոր ապագա: